

Վահան Տերյանի «Տխրություն» բանաստեղծության ուսուցում

Վահան Տերյանի բանաստեղծությունների *ուսուցման նպատակներն են*

ա/ գեղեցիկ և արտահայտիչ արտասանությունը

բ/ պատկերավոր մտածելակերպի դրսևորումը

գ/ երևակայության և ինքնուրույն ստեղծագործելու խթանում

դ/ բառապաշարի հարստացում և կիրառում

ե/ գրողի աշխարհայացքի ընկալում և մեկնաբանություն

զ/ սեփական ներաշխարհի հույզերի և զգացմունքների բացահայտում

Ուսումնական գործունեությունը կազմակերպվում է՝ հաշվի առնելով այս նպատակները:

Խթանման փուլ - ի՞նչ գիտեն Վահան Տերյանի մասին

Որևէ բանաստեղծություն կարո՞ղ են արտասանել

Ինչու՞ են հենց այդ բանաստեղծությունն ընտրել

Ի՞նչ պատկերներ են դուր եկել

Խթանաման փուլում տրամադրություններ են ստեղծվում տերյանական աշխարհի շուրջ:

/իրականացվում է սեփական ներաշխարհի և գրական ճաշակի բացահայտում/

Ընկալման փուլ -

Քայլ 1

Երեխաները տեղեկություններ են հաղորդում Վ. Տերյանի մասին, ուսուցչի ուղղորդող հարցերի օգնությամբ ամբողջանում է Տերյան մարդու, բանաստեղծի և հայրենասերի կերպարը՝

1/ ի՞նչը հատկապես տպավորվեց երեխաների մեջ

2/ ի՞նչ գիտեին և ի՞նչ նոր բան իմացան Տերյանի մասին և այլն:

/գրողի աշխարհայացքի ընկալում և մեկնաբանություն/

Քայլ 2

Երեխաների արտասանած բանաստեղծություններից դուրս գրել այն տողերը, որոնք շատ են դուր եկել, գրել գրատախտակին, որոշել՝ պատկերավորման ինչ միջոցներ է կիրառել Տերյանը:

/Բառապաշարի հարստացում և կիրառում/

Քայլ 3

Այնուհետև անդրադառնալ /սաներից մեկը ինքն այդ հարցը տվեց/ Տերյանի ասույթներից մեկին. «**Թախծում եմ ճիշտ է, բայց այնպես լուսավոր...**»: Երեխաների միտքը խթանելու համար առաջարկում եք շարունակել հետևյալ նախադասությունը.

Թախծում եմ, երբ..., եթե..., որովհետև..., թեև..., բայց...,

Հետաքրքիր մտքեր են ծնվում:

Օրինակ՝ **Թախծում եմ**, երբ նա հեռու է: **Թախծում եմ**, թեև տխուր չեմ: **Թախծում եմ**, որովհետև լսում եմ ջութակի քնքուշ մեղեդին:

/Պատկերավոր մտածելակերպի դրսևորում և զարգացում, ինքնուրույն ստեղծագործելու կարողություն/

Քայլ 4

Այս մտքերի ունկնդրումից հետո փորձում են մեկնաբանել Տերյանի **լուսավոր թախիծ** պարադոքսը. Գրատախտակին գրում եք այդ արտահայտությունը, և սկսվում է մտքերի տարափը:

Շատ հետաքրքիր մեկնաբանություններ են ստացվում:

Օրինակ՝ **լուսավոր թախիծ** – հույս, արև, հուշեր, կարոտ, սպասում, վերադարձ, կորուստ, հավատ, սեր...

Այսպիսով, երեխաները իրենք են զգում և հասկանում այս խորհրդավոր արտահայտության ողջ գեղեցկությունն ու իմաստությունը:

/ Երևակայության և ինքնուրույն ստեղծագործելու խթանում/

/ սեփական ներաշխարհի հույզերի և զգացմունքների բացահայտում/

Քայլ 5

Այնուհետև գրատախտակին գրվում է **տխրություն** բառը և երեխաներին առաջարկվում՝ իրենց պատկերացումով ինչ գույն, ինչ ձև և ձայն ունի տխրությունը:

Ստացվում է **տխրության** խորհրդանիշը՝ ըստ սաների:

Օրինակ՝ *գույն*- սև, մութ, մոխրագույն, սպիտակ,

ծև - մշուշ, հեռացող մարդու կերպարանք, կանացի աննշմար
դեմք,

ծայն – հեռավոր արձագանք, տխուր հառաչանք, անձրևի

կաթիլների թակոց:

Այս ամենից հետո սաները պատրաստ են ընկալելու Տերյանի «Տխրություն»
բանաստեղծությունը:

/ Երևակայության և ինքնուրույն ստեղծագործելու խթանում/

Քայլ 6

Նախ ուսուցիչը պատմում է «Մթնշաղի անուրջներ» ժողովածուի ընդհանուր
տրամադրությունների և թեմաների մասին, որ այն տպագրվել է 1908թ-ին և
սկսվում է «Տխրություն» բանաստեղծությամբ: Ապա գեղեցիկ արտասանում է
բանաստեղծությունը, այնուհետև կարող է առաջարկել քառաբաժանի մեթոդը
/ի՞նչ տեսա, լսեցի, զգացի, հասկացա/ կամ ուղղակի համեմատել Տերյանի
պատկերած տխրությունը սաների ներկայացրած պատկերների հետ:
Հետաքրքիրն այն է, որ դրանք գրեթե նույնն են:

Ուսուցիչը ցույց է տալիս կամ սաների հետ միասին եզրակացնում են, թե որքան
ճշմարտացի և բնորոշ են Տերյանի պատկերած զգացմունքները և որքան
հոգեհարազատ յուրաքանչյուր մարդու:

Այնուհետև սկսել բանաստեղծության պատկերային և գաղափարական
վերլուծությունը, այսինքն՝ աշխատանք բնագրով: Կարելի է բաժանել խմբերի և
այդպես աշխատել կամ անհատական:

Կշռադատում

Գրառումների օրագրում սաները կարող են նշել իրենց տպավորությունները,
դուր եկած պատկերները, նաև ինչ կուզեին իմանալ լրացուցիչ, կարող են իրենց
առաջարկությունները գրել: Ապա ընթերցել:

Յուրացման աշխատանքներ

Անգիր սովորել բանաստեղծությունը, նաև դուր եկած ուրիշ
բանաստեղծություններ:

Տերյանական որևէ տող ընտրել, դարձնել վերնագիր և գրել ստեղծագործական
շարադրություն կամ ինքնուրույն հորինել բանաստեղծություն:

